ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԽՏԻԿՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ
ՀՀ ԱՆ ՔԿԱԳ Գավառի տարածքային բաժնի պետ,
ԳՊՀ դասախոս
e-mail: Qolozyan0202@mail.ru

Հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում ամուսնությունների գրանցման կարգին և պայմաններին: Նպատակն է՝ բացահայտել ամուսնության ինստիտուտի սոցիալ-իրավական էությունը, առանձնահատկությունները, գրանցման կարգը, ինչպես նաև ամուսնության ինստիտուտի միջազգային փորձը:

Օգտագործվել են վերլուծական և իրավահամեմատական մեթոդները, ուսումնասիրվել է Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսդրությունը: Արվել է եզրակացություն, որ մինչև ամուսնություն գրանցելը, մինչև ամուսնական կյանքը սկսելը առողջ սերնդարարման նպատակով անհրաժեշտ է անցնել որոշ բժշկական հետազոտություններ:

Բանալի բառեր՝ *ամուսնություն, ամուսնական տարիք, կամավոր համաձայնություն, համատեղ դիմում, պետական տուրք:*

Ընտանեկան իրավունքի զարգացման պատմության մեջ գոյություն են ունեցել և ունեն տարբեր տեսակետներ ամուսնության իրավական բնույթի վերաբերյալ: «Ամուսնություն» հասկացությունը ՀՀ օրենսդրությամբ չի սահմանվել: Օտար երկրների օրենսդրություններում ամուսնությունը բնութագրվում է տարբեր կերպ՝ որպես գործարք, որպես կարգավիճակ, որպես հատուկ տեսակի ինստիտուտ և այլն: Օրինակ՝ Սիրիական օրենսդրությամբ ամուսնությունը բնորոշվում է որպես «կնոջ և տղամարդու միջև կնքված պայմանագիր, որն ուղղված է համատեղ ընտանիքի կազմավորմանը և հասարակական վերարտադրության ապահովմանը»)1:

Ամուսնությունը բնորոշվում է որպես «կարգավիճակ, որը օրենքով սահմանված գործողությունների արդյունքում ձեռք է բերվում սուբյեկտի կողմից: Այս կարգավիճակի առկայությունը թույլ է տալիս սուբյեկտներին դասակարգել ամուսնացածների կատեգորիայի մեջ» [1]:

Ամուսնական հարաբերությունների մեծ մասը օրենքով չի կարգավորվում:

Ամուսնական հարաբերությունները կարգավորվում են սովորույթներով, ավանդույթներով:

ՀՀ Ընտանեկան օրենսգիրքը (այսուհետ ԸՕ) կարգավորում է միայն ամուսնության կարգն ու պայմանները: Ամուսնության ոլորտի հարաբերությունները կար-

[1] Տե՛ս **Косова, О.Ю,** "Фактические браки" и семейное право, Правоведение 1999, N3, էջ 105:

գավորող նորմերի վերլուծության հիման վրա կարելի է եզրակացնել, որ «ամուսնությունը տղամարդու և կնոջ կամավոր միությունն է, որը հիմնված է փոխադարձ սիրո և հարգանքի վրա, ուղղված է ընտանիքի ստեղծմանը և փոխադարձ անձնական ոչ գույքային և գույքային իրավունքների և պարտականությունների առաջացմանը և գրանցված քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում»:

Ամուսնության՝ որպես պայմանագրի մասին հայացքները ձևավորվել են դեռևս Հին Հռոմում: Հռոմեական իրավունքում ամուսնության բոլոր հիմնական ձևերը հասարակ քաղաքացիական գործարքներ էին:

Հետագայում կանոնական նորմերը ամուսնության ինստիտուտին հաղորդեցին առեղծվածային բնույթ՝ ընդգծելով նրա հոգևոր կողմը: Ամուսնության կրոնական ըմբռնման էությունն այն էր, որ ամուսնու և կնոջ միջև ապահովվեր լիարժեք (ֆիզիկական, բարոյական, տնտեսական, իրավական, կրոնական) հաղորդակցություն: Այսպիսով՝ ոչ միայն իրավական, այլև էթիկական, կրոնական և որոշ չափով ամուսնության ֆիզիկական տարրերը դառնում էին իրավական կարգավորման առարկա:

Այն ժամանակ, երբ ընտանեկան հարաբերությունները կարգավորվում էին կրոնական օրենքներով, այս մոտեցումը լիովին արդարացված էր, բայց շուտով աշխարհիկ նորմերը փոխարինելու եկան կրոնական նորմերին, և վերջիններս համարվեցին հնացած:

Աշխարհիկ օրենքները, ի տարբերություն կրոնականների, չեն կարգավորում և չեն կարող կարգավորել հոգևոր, բարոյական ոլորտին պատկանող հարաբերությունները: Ամուսնության մեջ կարող ենք պայմանականորեն տարբերակել հարաբերությունների հետևյալ խմբերը՝ հոգևոր, ֆիզիկական և նյութական: Ամուսնական հարաբերությունների վերոհիշյալ տարբերակումը միանգամից չի ճանաչվել[1]:

Ամուսնության հոգևոր և ֆիզիկական տարրերը, իհարկե, չեն կարգավորվում օրենքով, և գրեթե բոլոր գիտնականները համաձայն են այս փաստի հետ:

Ամուսնություն կնքելու կողմերի կամքը պետք է գիտակցված լինի, և նրանք պետք է տեղյակ լինեն իրենց պարտականություններին: Պակաս կարևոր չէ նաև այն, որ ամուսնություն կնքելու ազատությունը ոչ միայն վկայում է ամուսնության մեջ գտնվող անձանց ընտանիքի ստեղծման փոխադարձ և գիտակցված պատրաստակամության մասին, այլև բացառում է ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքը (սպառնալիք, ծեծ, բռնություն կամ հոգեկանի վրա ազդելու այլ ձևեր) որևէ մեկի կողմից իրենց կամքին հակառակ[2]: Նման հարկադրանքը կարող է իրագործվել ինչպես ամուսնացածի, այնպես էլ նրա ծնողների, մերձավոր հարազատների, ծանոթների կամ այլ անձանց կողմից: Այնուամենայնիվ, պետք է տարբերել հարկադրանքը ծնողների՝

---

[1] Տե՛ս **Крашенниников П. В., Гонгало Б. М., Михеева Л. Ю., Рузакова О. А.,** Семейное право, учебник под. ред. Крашенниникова П.В.М., статут, 2008, էջ 302:

[2] Տե՛ս Гражданское и торговое право капиталистических стран. М., Высшая школа, 1980, էջ 347:

ապագա ամուսնություն կնքելու վերաբերյալ խորհուրդներից և առաջարկություններից:

Տղամարդու և կնոջ փոխադարձ կամավոր համաձայնությունն արտահայտվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնում ամուսնություն կնքելու մասին գրավոր հայտարարության մեջ: Կողմերը այն հաստատում են իրենց ստորագրություններով: Ամուսնության կնքման համար հաջորդ դրական պայմանը, որն անհրաժեշտ է ամուսնական հարաբերությունների առաջացման համար, ամուսնացող անձանց ամուսնական տարիքի հասած լինելն է:

1962թ. ՄԱԿ-ի շրջանակներում ընդունվել է Ամուսնական համաձայնության, ամուսնական տարիքի և ամուսնության գրանցման մասին կոնվենցիա, որի 2-րդ հոդվածում նախատեսվում է, որ անդամ պետություններն ազգային օրենսդրությամբ սահմանում են ամուսնության նվազագույն տարիքը, և չի թույլատրվում ամուսնության նվազագույն տարիքին չհասած քաղաքացիների ամուսնությունը[1]: ՀՀ ԸՕ 10-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ « Ամուսնության կնքման համար անհրաժեշտ են ամուսնացող տղամարդու և կնոջ փոխադարձ կամավոր համաձայնությունը և նրանց ամուսնական՝ տասնութ տարեկան տարիքի հասնելը: Անձը կարող է ամուսնանալ նաև 17 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը: Անձը կարող է ամուսնանալ նաև 16 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը, և ամուսնացող մյուս անձը առնվազն 18 տարեկան է»: Օրենքով ամուսնության տարիք է սահմանվում տասնութ տարեկանը, որը համընկնում է քաղաքացու՝ ամբողջ ծավալով քաղաքացիական գործունակության ձեռքբերման հետ: Այս առումով կարևոր է նկատի ունենալ, որ տասնութ տարին չլրացած անձը համարվում է անչափահաս երեխա՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Ամուսնական տարիքը սահմանվում է օրենքով, որպես ամունություն կնքելու համար պահանջվող նվազագույն տարիք և, ինչպես նշվում է ընտանեկան իրավունքի վերաբերյալ գրականության մեջ, նաև ամուսնացող անձանց կամքի և գիտակցության համապատասխան հասունության աստիճանը որոշող տարիք, որը ոչ միայն վերաբերում է անձի իրավական կարգավիճակին, այլև ունի սոցիալական հիգիենայի նկատառումներ: Չափահասության տարիքի հասնել՝ նշանակում է ունենալ ֆիզիկական և ֆիզիոլոգիական, սոցիալական ու հոգեբանական, ինչպես նաև բարոյական զարգացման բավարար աստիճան, որը համապատասխանում է տվյալ պետության հասարակական-տնտեսական կեցության պայմաններում խելամիտ քաղաքացու սպասելի ունակություններին: Դա այն տարիքն է, երբ ամուսնացող անձը լիովին պատկերացնում է իրեն որպես տվյալ հասարակության անդամ, տվյալ պետության քաղաքացի, գիտակցում է իր սոցիալական պարտականությունները, գիտի, թե ինչ է ընտանիքը, ամուսնությունը,

[1] http://www.un.org/ru/documents/decl_conv/conventions/conmarr.shtm:

բավարար գիտելիքներ և ունակություններ ունի ստանձնելու ապագա սերնդի՝ իր երեխայի դաստիարակությունը ազգային-պետական ոգով ու արժեհամակարգով[1]: Այսինքն՝ ակնհայտ է, որ տասնութ տարեկանում անձը ֆիզիկապես հասունանում է ընտանիք կազմելու համար: Տասնութ տարեկան երիտասարդ կինը կարող է առանց իր առողջությունը վնասելու ունենալ առողջ երեխա: Տասնութ տարեկան երիտասարդ տղամարդիկ կարող են լիարժեք հաշվետու լինել իրենց արարքների համար:

Ինչ վերաբերում է ամուսնության տարիքային սահմանափակումներին, ինչպես նաև ամուսնացող անձանց միջև տարիքային տարբերություններին, ապա ինչպես Հայաստանի, այնպես էլ մի շարք արտասահմանյան պետությունների օրենսդրություններում ամուսնական տարիքի հետ կապված սահմանափակումներ չկան. դրանք չեն սահմանվում օրենքով: Ամուսնության համար առավելագույն տարիք չի սահմանափակվում: Ամուսնանալ կարող են ինչպես նոր չափահասության տարիքի հասած, այնպես էլ պատկառելի տարիք ունեցող անձինք: Իրավաբանական տեսանկյունից նշանակություն չունի նաև ամուսնացող անձանց տարիքային մեծ կամ փոքր տարբերությունը: Նշանակում է՝ չափահաս, գործունակ անձինք կարող են ամուսնական կապերի մեջ մտնել՝ անկախ իրենց տարիքից:

Անհրաժեշտ է նշել, որ ամուսնական տարիք որոշելը պատահական հարց չէ. այն որոշվում է առանց հիմքերի՝ ելնելով տարբեր հանգամանքներից: Ամուսնական տարիքի որոշման ժամանակ հաշվի են առնվում բնակլիմայական, կենսաբանական գործոններից մինչև սոցիալական տնտեսական ու իրավական բնույթի հանգամանքները:

Ամուսնական տարիքը շատ պետություններում գրեթե նույնն է: Այսպես, ՌԴ ընտանեկան օրենսգրքով ամուսնական տարիքը 18 տարին է և՛ տղամարդու, և՛ կնոջ համար: Իսկ բացառիկ դեպքերում կարող է ամուսնական տարիքն իջեցվել ոչ ավելի, քան երկու տարով: Վրաստանի Հանրապետության օրենսդրությամբ ևս 18 տարի է սահմանված երկու սեռի ներկայացուցիչների համար: Բուլղարիայում և՛ տղամարդու, և՛ կնոջ համար նախատեսվում է 18 տարին: Հունգարիայում և Ճապոնիայում 18 տարին է սահմանված տղամարդու, 16 տարին՝ կնոջ համար: Լեհաստանում տղամարդու ամուսնական տարիք է սահմանված 21, կանանց համար՝ 18 տարին:

Այս հարցում հետաքրքիր է Պորտուգալիայի օրենսդրությունը: Մինչև 1978 թվականը ամուսնական տարիքը տղամարդու և կնոջ համար 14 տարին էր: Սկսած 1978 թվականից՝ երկուսի համար էլ սահմանվեց է 16 տարին: Ընդ որում, 16 տարեկան դարձած անձինք կարող են ամուսնանալ միայն ծնողների համաձայնությամբ: 21

[1] Տե՛ս **Ա.Հակյանց**, հոդված՝ «Ամուսնության կնքման պայմաններ/հիմնախնդիրներ/դրանց լուծման ուղիները», Երևան, ԵՊՀ հրատ. 2017, էջ 196:

տարեկան դառնալուց հետո միայն նրանք կարող են ամուսնանալ ինքնուրույն որոշմամբ[1]:

Ընդհանուր կանոն է այն, որ ամուսնանալ ցանկացող անձինք ամուսնության պետական գրանցման պահին պետք է հասած լինեն օրենքով սահմանված տարիքի, այլ ոչ թե այն օրը, երբ ամուսնության դիմումը ներկայացվել է ՔԿԱԳ մարմին: Օրենքով չեն սահմանվում տասնվեց տարեկանում անձանց ամուսնության պատճառները: Պրակտիկայում առավել հաճախ հանդիպող պատճառներից են անչափահասի հղիության կամ երեխայի ծնվելու փաստը: Այդ պատճառների թվին կարող են դասվել նաև զինվորական ծառայության առաջիկա զորակոչը, փաստացի ամուսնական հարաբերությունները ամուսնական տարիքի չհասած անձի հետ և այլն:

Ամուսնական տարիքի չհասած անձանց ամուսնության պետական գրանցումը կատարվում է ընդհանուր հիմունքներով: Անձանց ամուսնության դեպքում, մինչև օրենքով սահմանված կարգով չափահասության տարիքի հասնելը, ամուսնության պետական գրանցման օրվանից անչափահաս ամուսինը ամբողջ ծավալով է ձեռք բերում քաղաքացիական գործունակություն: Ավելին, անձի գործունակությունը պահպանվում է նույնիսկ ամուսնալուծությունից հետո՝ մինչև չափահասության տարիքի հասնելը: Ամուսնությունն անվավեր ճանաչելիս դատարանը կարող է վճիռ կայացնել դատարանի կողմից որոշված պահից անչափահաս ամուսնու ձեռք բերած գործունակության կորստի մասին, այսինքն՝ նման դեպքում անչափահասը շարունակում է մնալ սահմանափակ գործունակ անձ:

Ամուսնության կնքման պայմանները բխում են ամուսնության էությունից և նպատակներից: Դրանք անհրաժեշտ են, որպեսզի ամուսնությունը ստանա օրենքի ուժ: Հակառակ դեպքում ամուսնությունը կարող է ճանաչվել անվավեր, քանի որ ընտանեկան իրավունքի գիտության մեջ և իրավակիրառ պրակտիկայում ամուսնության վերոհիշյալ պայմանները համարվում են ամուսնություն կնքելու համար էական հանգամանքներ:

Ամուսնացող անձանց՝ տղամարդու և կնոջ միջև փոխադարձ կամավոր համաձայնությունը և ամուսնական տարիքի հասած լինելը, որպես ամուսնություն կնքելու համար դրական պայմաններ, սահմանված են նաև օտարերկրյա պետությունների օրենսդրություններում (օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության ընտանեկան օրենսգրքում):

Ամուսնության այս երկու դրական պայմաններն անհրաժեշտ են բոլոր դեպքերում: Ընդ որում, դրանք սպառիչ են, և որևէ այլ պայմանի անհրաժեշտություն չկա: Մասնավորապես, ամուսնության համար օրենսդրությամբ չի պահանջվում ամուսնացողների ծնողների համաձանությունը, իսկ անչափահաս ամուսնացողների դեպքում

[1] Տ՛ես Ղարախանյան **Գ.Հ., *ՀՀ Ընտանեկան իրավունք,*** Խմբ.՝Տ.Կ. Բարսեղյան, Եր, ԵՊՀ հրատ., 2008թ., էջ 126:

անհրաժեշտ է ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը (տասնվեց տարեկան անչափահասի դեպքում անհրաժեշտ է նաև, որ ամուսնացող մյուս կողմը լինի 18 տարեկան):

Ամուսնության կնքման դրական պայմաններից զատ, կան նաև արգելքներ, որոնց առկայության դեպքում ամուսնության պետական գրանցումը դառնում է անհնար և անօրինական: Այդ արգելքների առկայության դեպքում ամուսնությունը կարող է անվավեր ճանաչվել դատարանի կողմից:

Ամուսնության կնքման արգելքների ցանկը սպառիչ է և ենթակա չէ փոփոխման: Ամուսնության կնքման արգելքներն են՝

ա) ամուսնացողներից թեկուզ մեկի՝ օրենքով սահմանված կարգով այլ գրանցված ամուսնության մեջ գտնվելը,

բ) ամուսնացողների միջև մերձավոր ազգակցական կապի առկայությունը,

գ) ամուսնությունը որդեգրողի ու որդեգրվածի միջև,

դ) ամուսնացողներից թեկուզ մեկի՝ դատական կարգով անգործունակ ճանաչված լինելը: Թվարկվածները պատկանում են ամուսնության կնքման բացասական պայմանների շարքին: Այս պայմանները նախատեսված են նաև ՀՀ Ընտանեկան օրենսգրքի 11–րդ հոդվածում:

ա) Ամուսնացողներից թեկուզ մեկի՝ օրենքով սահմանված կարգով այլ գրանցված ամուսնության մեջ գտնվելը: Ամուսնությունը չի թույլատրվում այն անձանց միջև, որոնցից առնվազն մեկը արդեն մեկ այլ գրանցված ամուսնության մեջ է: «Մեկ այլ գրանցված ամուսնության» արտահայտության տակ հասկացվում է անձի նախկին գրանցված ամուսնությունը, որը չի դադարել օրենքով սահմանված կարգով: Սակայն դե ֆակտո՝ փաստացի (չգրանցված) ամուսնական հարաբերությունները խոչընդոտ չեն հանդիսանում ամուսնություն կնքելու համար: Այս արգելքը գալիս է մոնոգամիայի (մենամուսնություն) սկզբունքից, համաձայն որի՝ տղամարդը և կինը իրավունք ունեն գտնվելու միայն մեկ գրանցված ամուսնության մեջ: Սրանով իսկ պետությունը պաշտպանում է մենամուսնությունը (մոնոգամիան)՝ արգելելով երկկնությունն ու բազմակնությունը (պոլիգամիան):

Բազմակնության դեպքերը կանխելու համար ՔԿԱԳ մարմին պահանջվում է ներկայացնել ամուսնանալ ցանկացողների միասնական դիմումը, թե արդյո՞ք նրանցից որևէ մեկը գտնվել կամ գտնվում է այլ գրանցված ամուսնության մեջ, թե ոչ: Նախկինում գրանցված ամուսնության մեջ գտնված անձինք պետք է ներկայացնեն նախորդ ամուսնության դադարեցումը հաստատող փաստաթուղթ: Այն կարող է լինել ամուսնալուծության վկայականը (որը տրվել է ՔԿԱԳ մարմնի կողմից), նախկին ամուսնու մահվան վկայականը կամ մահացած հայտարարելու մասին դատարանի՝

օրինական ուժի մեջ մտած վճիռը, որը նախկին ամուսնությունը դարձնում է անվավեր[1]:

Ժամանակակից պետությունների մեծամասնությունը մերժում է բազմակնությունը կամ պոլիգամիան, բայց կան նաև երկրներ, որտեղ թույլատրվում են նման ամուսնություններ: Հնագույն հասարակություններում ընդունված է եղել բազմակնությունը: Կանանց թվաքանակի գերազանցումը և պատերազմների պատճառով տղամարդկանց թվաքանակի նվազումն է բերել բազմակնության:

Բազմակնության փորձը լայնորեն տարածված էր արաբների մոտ մինչև իսլամի ընդունումը: Այս փորձն արդարացի չէր, և նրանում տեղ չուներ «կնոջ իրավունքներ» հասկացությունը: Տղամարդը կարող էր ունենալ այնքան կին, որքան ցանկանար, և դա հանգեցնում էր բարոյականության անկմանը: Իսլամի ծագումից հետո մտցրվեց որոշակի սահմանափակում, համաձայն որի՝ թույլատրվում էր ունենալ ոչ ավելի, քան չորս կին, որոնք պետք է ունենային հավասար իրավունքներ և արժանանային նույնանման վերաբերմունքի: ՀՀ Ընտանեկան օրենսգիրքը, սակայն, ամրապնդում է մենամուսնությունը (մոնոգամիան): ՀՀ ԸՕ-ի 11-րդ հոդվածի համաձայն՝ ամուսնություն չի թույլատրվում այն անձանց միջև, որոնցից թեկուզ մեկն արդեն այլ ամուսնության մեջ է գտնվում: Այն համապատասխանում է մեր հասարակության բարոյաէթիկական նորմերին և ավանդույթներին: Բացի այդ, այն ապահովում է տղամարդու և կնոջ իրավահավասարությունը ընտանեկան հարաբերություններում:

Բ) Ամուսնացողների միջև մերձավոր ազգակցական կապի առկայությունը:

ՀՀ Ընտանեկան օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ արգելվում է ամուսնություն կնքել մերձավոր ազգականների (ուղիղ վերընթաց ու վայրընթաց ազգականների՝ ծնողների ու զավակների, պապի, տատի ու թոռների, ինչպես նաև հարազատ և համահայր կամ համամայր եղբայրների ու քույրերի, մորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր և մորեղբոր զավակների) միջև: Ինչպես նաև արգելվում է ամուսնությունը հոր ու աղջկա, մոր և տղայի, պապի և թոռան միջև:

Ուղիղ վերընթաց ազգակցական կապը գոյություն ունի սերունդների և նախնիների, իսկ վայրընթացը՝ նախնիներից սերունդների միջև: Հարազատ ազգակիցներ են համարվում քույրերը և եղբայրները, ովքեր ունեն ընդհանուր հայր և մայր, իսկ խորթ են համարվում նրանք, ովքեր ունեն ընդհանուր կա՛մ հայր, կա՛մ մայր:

Մերձավոր ազգակիցների միջև ամուսնությունների արգելումը պայմանավորված է կենսաբանական և բարոյաէթիկական նկատառումներով, որոնք կապված են ինչպես ամուսինների առողջ սերունդ տալու (քանի որ պաթոլոգիական գեների կուտակման պատճառով հավանականությունը շատ մեծ է, որ նման ամուսնություններից կարող են ծնվել ծանր հիվանդություններ ունեցող երեխաներ), այնպես էլ ժամանակակից քաղաքակակիրթ հասարակության ձևավորման հետ:

---

[1] Տե՛ս **Поссе Е.А, Фадеева Т.А.,** Проблемы семейного права, Ленинград, 1976, էջ 9:

Նախաքրիստոնեական շրջանում տարածված էր բազմակնությունը, և թույլատրվում էր ամուսնությունը հարազատների միջև: Հայտնի է, որ Արտավազդ Բ-ի թոռը՝ Տիգրան Դ-ն, ամուսնացել է քրոջ՝ Էրատոյի հետ և նրան հռչակել թագուհի: Սակայն 301 թվականին քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակելուց հետո եկեղեցական կանոններով արգելվեց երկրորդ, ինչպես և գաղտնի կամ ազգականների՝ միմյանց հետ ամուսնությունը: Փավստոս Բուզանդի վկայությամբ՝ 365 թվականին Ներսես Ա Մեծ կաթողիկոսի և Արշակ Բ-ի նախաձեռնությամբ Տարոն գավառի Աշտիշատ գյուղում հայկական եկեղեցական առաջին կանոնադիր ժողովն արգելել է մերձավոր ազգականների ամուսնությունը, բազմակնությունը և այլն: Շահապիվանի 447 թվականի ժողովն ազգակցական (արյունակցական) կապեր ունեցող անձանց ամուսնությունը համարել է «պղծություն և գարշանք», հեթանոսական մնացուկ և արգելել մինչև 4-րդ սերունդ: Կիլիկյան Հայաստանում հատուկ կարևորությամբ են վերաբերվել ամուսնաընտանեկան հարաբերություններին, անառողջների ամուսնությունը դիտվել է ազգի ապականություն և արգելվել բժշկական զննումից հետո:

Հայ եկեղեցու օրենքի և կանոնի համաձայն՝ այսօր մերձավոր բարեկամները չեն կարող իրար հետ ամուսնանալ: Թերևս ոչ քրիստոնյա շատ ազգերի մոտ ամուսնությունը լինում է նաև քույր ու եղբոր միջև, որ իհարկե ըստ մեր Եկեղեցու ճիշտ չէ, քանի որ նույն արյունով և շատ մոտ ամուսնություններից ծնված երեխաները երբեք էլ առողջ չեն լինում և՛ մտավոր, և՛ հոգեկան, և՛ ֆիզիկական իմաստներով: Այսինքն՝ ամուսնության կնքման արգելք պետք է համարել նաև անձանց՝ իրավաբանորեն չձևակերպված ազգակցությունը: Եթե, օրինակ, տղամարդու արտամուսնական կապերի հետևանքով տարբեր մայրերից ծնվել են տղա և աղջիկ, ապա վերջիններս գտնվում են արտամուսնական ազգակցության մեջ, արյունակիցներ են, համահայր են: Նրանց միջև ևս ամուսնությունն անթույլատրելի պետք է համարել:

Ավելի հեռավոր ազգակիցների (օրինակ՝ քեռու և քրոջ աղջկա, հորեղբոր ու եղբոր աղջկա,) միջև ամուսնությունները թեև տեսականորեն կարող են վտանգ ներկայացնել ամուսիններից սերված երեխաների առողջության համար, չնայած ավելի փոքր չափով, այնուամենայնիվ ամուսնության գրանցման արգելք չեն հանդիսանում: Ամուսնության համար սահմանված արգելքների մեջ չեն մտնում բարեկամական հարաբերությունները, քանի որ դրանք հիմնված չեն արյունակցական կապի վրա: Չի արգելվում նաև ամուսնությունը երկու ամուսինների ազգականների միջև, քանի որ նրանց միջև չկա արյունակցական կապ: Օրենքը սահմանափակումներ չի նախատեսում խորթ եղբոր և խորթ քրոջ ամուսնության մեջ (վերջիններս ամուսիններից ամեն մեկի՝ նախկին ամուսնությունից ունեցած երեխաներն են):

գ) Արգելվում է ամուսնությունը որդեգրողի ու որդեգրվածի միջև: Արգելվում է ամուսնությունը որդեգրող ծնողի և որդեգրվող երեխայի միջև, քանի որ նրանց հարաբերությունները հավասար են ծնող-երեխա հարաբերություններին: Արգելքը

հիմնվում է բարոյական և էթիկական գործոնների վրա: Անթույլատրելի պետք է համարել ամուսնությունը նաև որդեգրվածի և նրան որդեգրած անձի զավակների միջև, քանի որ նրանք ըստ էության հանդես են գալիս եղբոր ու քրոջ կարգավիճակում: Եթե առկա է որդեգրումը անվավեր ճանաչելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշում, ապա նախկին որդեգրողի և որդեգրվողի ամուսնություն կնքելու միջև արգելքներ չկան: Ինչ վերաբերում է որդեգրող ծնողի և որդեգրվողի սերունդների միջև ամուսնություններին, ապա օրենքը այդ հարցի շուրջ որևէ կարգավորում չի սահմանում:Սակայն գրականության մեջ կա կարծիք, որ նման ամուսնությունները պետք է համարեն անվավեր, քանի որ նշված անձանց վրա պետք է տարածվեն նույն կանոնները, ինչ որ վերընթաց ու վայրընթաց ազգականների վրա:

Թեև որդեգրողի ու որդեգրվածի միջև արյունակցական կապ չկա, նրանց միջև ամուսնությունն արգելելն ունի միայն բարոյական նպատակ: Որդեգրողի և որդեգրվածի միջև ամուսնության արգելքը կրում է ոչ թե կենսաբանական, այլ սոցիալական բնույթ:

դ) Ամուսնացողներից թեկուզ մեկի՝ դատական կարգով անգործունակ ճանաչված լինելը: Չի թույլատրվում ամուսնության կնքում այնպիսի անձանց միջև, որոնցից մեկը դատարանի կողմից ճանաչվել է անգործունակ՝ հոգեկան հիվանդության պատճառով: ՀՀ Քաղ. օրենսգրքի 31–րդ հոդվածի համաձայն՝ «Քաղաքացին, որը հոգեկան խանգարման հետևանքով չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք, կարող է դատարանով անգործունակ ճանաչվել՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Նրա նկատմամբ սահմանվում է խնամակալություն»: Անձին անգործունակ ճանաչելու կարգը սահմանված է քաղաքացիական դատավարության օրենսգրքով: Քանի որ անգործունակ անձինք չեն կարող հասկանալ իրենց գործողությունների նշանակությունը և ղեկավարել դրանք (գործողությունները), նրանք ընդունակ չեն արտահայտելու իրենց գիտակցված կամքը ամուսնության մեջ մտնելու կապակցությամբ:

Պետք է ուշադրություն դարձնել այն փաստին, որ ամուսնությունը կնքելու համար արգելք է համարվում անձի անգործունակությունը, որը դատարանի կողմից կայացված վճռով հաստատվել է մինչև ամուսնության պետական գրանցումը: Իսկ եթե ամուսինը անգործունակ է ճանաչվել ամուսնությունը կնքելուց հետո, ապա այդ հանգամանքը կարող է որպես հիմք դիտարկվել ամուսիններից մեկի պահանջով ամուսնությունը լուծելու համար, բայց ոչ ամուսնությունը անվավեր ճանաչելու համար:

Ամուսնության կնքման կարգը և ամուսնության կնքման համար արգելք հանդիսացող հանգամանքները պետք է ՔԿԱԳ մարմինների կողմից հաստատվեն ամուսնության պետական գրանցման պահին: Այդ պատճառով ամուսնության պետական գրանցման համար օրենքով սահմանված կարգը նախատեսում է որոշակի պա-

հանջների պահպանում, որոնք ուղղված են ՔԿԱԳ մարմինների կողմից ամուսնության կնքման համար հնարավոր արգելքների առկայությունը պարզելուն:

Այսպիսով՝ ամուսնության կնքման համար արգելքների բացակայության մասին պետք է նշված լինի ամուսնության մեջ մտնել ցանկացող անձանց համատեղ դիմումի մեջ: Բացի դրանից, այդ անձինք ՔԿԱԳ մարմինների կողմից նախազգուշացվում են ամուսնության համար արգելք հանդիսացող հանգամանքները թաքցնելու համար վրա հասնող պատասխանատվության մասին:

ՔԿԱԳ մարմնի ղեկավարը կարող է մերժել ամուսնության պետական գրանցումը, եթե կարծում է, որ այդ ապացույցները հաստատում են ամուսնության կնքման համար արգելքների առկայությունը: Իսկ եթե այդպիսի արգելքների վերաբերյալ վկայությունները չեն հաստատվում, ապա ամուսնության գրանցումն իրականացվում է ընդհանուր հիմքերով:

Այնուամենայնիվ, օրենքը հնարավորություն է ընձեռում կողմերին համատեղ դիմումի հիման վրա ամուսնության գրանցման ժամկետը օրինական կերպով կրճատելու, եթե առկա են հիմնավոր պատճառներ: Օրենքը չի սահմանում ամուսնության ժամկետի փոփոխման պատճառների կոնկրետ ցանկ: Նման պատճառներից կարող են լինել ամուսնացող անձանց համատեղ երեխա(ներ) ունենալը, ամուսնացող կնոջ հղիությունը, ամուսնացող անձի զորակոչվելը ժամկետային զինվորական ծառայության, ամուսնացող անձի՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերում ծառայության կամ ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվելը, Հայաստանի Հանրապետությունում ամուսնացող օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, օտարերկրյա պետությունում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ միմյանց կամ օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հետ ամուսնության դեպքում ամուսնացողների կամ նրանցից մեկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից երկարատև ժամանակով մեկնելու (բացակայելու) դեպքում, ամուսնացող անձի ծանր հիվանդությունը: Ամուսնության պետական գրանցման ժամկետը, ելնելով կոնկրետ հանգամանքներից, կարող է կրճատվել նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության պետի թույլտվությամբ:

Ամուսնությունը կարող է նաև գրանցվել ՔԿԱԳ մարմին դիմում ներկայացնելու օրը: Դա հնարավոր է, եթե ամուսնացող անձինք ունեն հարգելի պատճառներ (կնոջ հղիություն, երեխայի ծնունդ, կողմերից մեկի կյանքին սպառնացող հիվանդություն): Այս պատճառները պետք է հաստատվեն համապատասխան փաստաթղթերով (բժշկական տեղեկանք, աշխատանքի վայրից տեղեկանք և այլն):

Ամուսնությունը կնքվում է միայն ամուսնանալ ցանկացողների պարտադիր ներկայությամբ: Ամուսնությունը ներկայացուցիչների կամ հոգաբարձուի միջոցով

օրենքով չի թույլատրվում: Միայն հարսնացուի և փեսացուի խնդրանքով ամուսնության գրանցումը կարող է ուղեկցվել հանդիսավոր պայմաններում: Վկաների, հարազատների, ընկերների ներկայությունը նույնպես կողմերի ցանկությամբ է:

Որպես ընդհանուր կանոն, ամուսնության պետական գրանցումը կատարվում է ՔԿԱԳ մարմնի տարածքում: Այնուամենայիվ, եթե ամուսնանալ ցանկացող անձինք չեն կարող ներկայանալ գրանցման մարմին (լուրջ հիվանդության կամ այլ հարգելի պատճառներով), գրանցումը կարող է կատարվել տանը, հիվանդանոցում, հաշմանդամների կամ տարեցների համար նախատեսված հաստատություններում և այլ վայրերում: Կալանքի տակ գտնվող կամ պատիժ կրող անձի հետ ամուսնության գրանցումը կատարում է ՔԿԱԳ մարմնի ղեկավարը՝ քրեակատարողական համապատասխան հաստատության ղեկավարի համաձայնությամբ ընտրված վայրում:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գրասենյակում ամուսնացողներին ծանոթացնում են գրանցման կարգին և պայմաններին, հավաստիանում են, որ նրանք տեղյակ են միմյանց առողջական և ընտանեկան վիճակին, ապագա ամուսիններին բացատրում են նրանց իրավունքներն ու պարտականությունները:

Ամուսնությունը համարվում է կնքված այն պահից, երբ ամուսնացողներն իրենց ստորագրություններն են դնում քաղաքացիական կացության ակտերի գրանցման գրքում: Հենց այդ պահից էլ առաջանում են ամուսինների ամուսնական իրավունքներն ու պարտականությունները: Գրանցումն իրականացնող անձանց կողմից գրանցման ժամանակ կազմվում է ամուսնության ակտ, որի հիման վրա տրվում է ամուսնության վկայական: Վկայականը տրվում է ամուսիններին և համարվում է ամուսնության պետական գրանցման փաստը հաստատող փաստաթուղթ: Դրա մեջ նշվում են հետևյալ տեղեկությունները՝ ա) ամուսնացողներից յուրաքանչյուրի անունը, հայրանունը, ազգանունը (մինչև ամուսնությունը և ամուսնությունից հետո), ազգությունը՝ ամուսնության ակտի գրառմանը համապատասխան, ծննդյան վայրը և ժամանակը, քաղաքացիությունը, բ) ամուսնության ակտի գրառման ժամանակը և համարը, գ) ամուսնության պետական գրանցման վայրը (ՔԿԱԳ մարմնի անվանումը), դ) ամուսնության վկայական տալու ժամանակը: Ամուսնության պետական գրանցման ժամանակ ամուսնության ակտի գրառման մեջ ամուսինների ազգանունը լրացվում է նրանց ցանկությամբ:

Եթե ՔԿԱԳ մարմնի կողմից անհիմն կերպով մերժվել է ամուսնությունը գրանցելու մասին դիմումը, ապա կողմերը կարող են իրենց խախտված իրավունքը պաշտպանելու համար դիմել դատարան:

Վերջին տարիներին լայն տարածում է ստացել <u>եկեղեցական ամուսնությունը</u>, թեև <u>ՀՀ</u> օրենսդրությունը ճանաչում է միայն <u>քաղաքացիական ամուսնությունը</u>, որը գրանցվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնում, իսկ եկեղեցական ամուսնությունը համարում է ամուսնացողների անձնական գործը, ուստի մինչև եկեղեցական արարողակարգով կատարված ամուսնությունը չգրանցվի

քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման մարմնում, այն իրավական հետևանքներ չի կարող առաջացնել:

Այսպիսով՝ ՀՀ ընտանեկան քաղաքականությունը կոչված է իրականացնելու ընտանիքի ամրապնդման և ընտանեկան արժեքների պաշտպանության գործառույթ՝ ապահովելով ընտանիքի շահերը սոցիալական զարգացման գործընթացում, ստեղծելով անհրաժեշտ պայմաններ ընտանիքի անդամների համար և բարձրացնելով հասարակության մեջ ընտանիքի դերը: Ընտանեկան հարաբերություններում անուղղակիորեն իր ներգործությունն ունի հասարակությունը: Դա այլ կերպ հնարավոր չէ պատկերացնել, քանի որ հակառակ դեպքում ընտանիքը չէր լինի հասարակության մասնիկ: Ամուսնաընտանեկան հարաբերությունների սուբյեկտների իրավունքների և ազատությունների պաշտպանության իրավական երաշխիքների ամրապնդումը և ընդլայնումն անկասկած կախված են ժամանակից: Հասարակության սոցիալ-տնտեսական կառուցվածքի փոփոխությունը, սոցիալիզմից անցումը կապիտալիզմին, պահանջեցին օրենսդրության էական փոփոխություններ, ներառյալ ընտանեկան իրավունքի, և դա պատճառ հանդիսացավ նոր ընտանեկան օրենսդրության ստեղծման:

Ամփոփելով վերոգրյալը՝ առաջարկվում է, որ մինչև ամուսնության պետական գրանցումը, ամուսնանալ ցանկացող զույգը պետության հովանու ներքո անցնի պարտադիր բժշկական հետազոտություն, և ՔԿԱԳ մարմնում ամուսնության պետական գրանցումն իրականացվի միայն համապատասխան բժշկական տեղեկանքի առկայության դեպքում և այդ տեղեկանքի բովանդակությանը ծանոթանալուց հետո, զույգերի փոխադարձ համաձայնության պարագայում:

Ընտանեկան օրենսգրքում նման իմպերատիվ նորմի ներդրումը կունենա մի շարք դրական հետևանքներ՝ կնպաստի ամուսնալուծությունների կրճատմանը, կխոչընդոտի վարակիչ հիվանդություններով միմյանց վարակելու հավանականությունը, կկանխարգելի հոգեկան հիվանդություններով տառապող անձանց կողմից այդ հիվանդությունը թաքցնելու հետևանքով առաջացող բացասական հետևանքները, ինչպես նաև գենետիկ հետազոտության շնորհիվ կնպաստի ապագա առողջ սերնդի ձևավորմանը, ինչն ընտանիքի լիարժեքության և երջանկության հիմքն է:

Ինչպես արդեն նշել էինք, սույն ուսումնասիրության նպատակն է՝ անել նոր առաջարկություններ, որոնք կարող են ներկայացվել ընտանեկան օրենսգրքում՝ ամուսնաընտանեկան հարաբերությունների կարգավորման շրջանակներում և որպես օրենսդրական ոլորտում նորարարություններ ոչ միայն հիմա, այլև ապագայում նպաստել պետության և հասարակության շահերին:

ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՑԱՆԿ

1. ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, 2004 թ.:
2. Косова О. Ю., Фактические браки и семейное право, Правоведение, 1999.
3. Крашенниников П. В., Гонгало Б. М., Михеева Л. Ю., Рузакова О. А., Семейное право/ учебник под. ред. Крашенниникова П. В., статут, 2008.
4. Пчелницева Л.М., Семейное право России/ учебник для вузов, 3-е изд., перераб и доп., Москва, Норма, 2004.
5. Нечаева А. М., Брак Семья Закон, Москва, 1984.
6. Гражданское и торговое право капиталистических стран. Москва, Высшая школа, 1980.
7. http://www.un.org/ru/documents/decl_conv/conventions/conmarr.shtm,
8. Ա. Հակյանց, հոդված՝ «Ամուսնության կնքման պայմաններ/ հիմնախնդիրներ /դրանց լուծման ուղիները», Երևան, ԵՊՀ հրատ. 2017,
9. Ղարախանյան ***Գ. Հ., ՀՀ Ընտանեկան իրավունք,*** Խմբ.՝ Տ. Կ. Բարսեղյան, Եր, ԵՊՀ հրատ., 2008թ.,
10. Поссе Е. А., Фадеева Т. А., Проблемы семейного права, Ленинград, 1976.
11. Синицина И. Е., Обычай и обычное право в современной Африке, Москва, Наука, 1979.
12. Ежов Ю. А., Семейное право России,учебное пособие, Изд. Дашков и К, 2000.
13. https://wedding.am/harciravabanin2.
14. Данилин В. И., Реутов С. И., Юридические факты в советском семейном праве, Свердловск, 1989.
15. Баженова О. И., Действительность брака в РФ / Под ред. Л.Ю. Исмаиловой, Москва, АО "Центр ЮрИнфо", 2006.
16. Кузнецова И. М., Семейное право: Учебник, Москва, Юристь, 1999.
17. Белякова А. М., Вопросы семейного права в судебной практике, Москва, 1989.
18. "Бюллетень Верхного Суда РСФСР", 1967, N 8.
19. Пергамент А. И., Основы законодательство о браке и семье, Москва, 1969.
20. О. С. Советское гражданское право, в трех томах, Т. III, Л., 1965.
21. Рясенцев В. А., Семейное право, Москва, 1971.
22. Маркс К. и Энгельс Ф., Избранные произведения, т. 2, Москва, 1955.
23. Ленин В. И., Полн. собр. соч., т. 25.
24. Ленин В. И., Полн. собр. соч., т. 30.
25. «Судебная практика», 1952, N 1.
26. Постановление Пленума Верховного Суда РСФСР от 21 февраля 1973 г., п. 8.

MARRIAGE REGISTRATION PROCEDURE AND CONDITIONS

BAKHTIKYAN LUSINE
Head of Gavar Territorial Department of
Civil Acts Registration Agency of the RA Ministry of Justice,
GSU Lecturer

The article is devoted to the procedure and conditions of marrage registration in the Republic of Armenia. The aim is to reveal the social and legal nature of the institution of marriage, its peculiarities, the order of registration, as well as the international experience of the institution of mariage.

Analytical, legal and comparative methods were used, the family code of the Republic of Armenia was studied. It was found out that some medical examinations are necessary for a healthy offspring before registering a marriage and starting married life.

Keywords: *Marriage, marital age, voluntary agreement, joint application, state duty.*

УСЛОВИЯ И ПОРЯДОК РЕГИСТРАЦИИ БРАКОВ

БАХТИКЯН ЛУСИНЕ
Начальник агентства записи актов гражданского состояния Гаварского
территориального управления Министерства юстиции РА,
Преподаватель ГГУ

Статья посвящена порядку и условиям регистрации браков в Республике Армения. Цель исследования - выявление социально-правовой сущности, особенности и порядок регистрации института брака, а также международный опыт института брака. Были использованы аналитические и правовые методы, изучено семейное законодательство Республики Армения. Сделан вывод, что до вступления в брак и до начала супружеской жизни, для здорового потомства, необходимо пройти некоторые медицинские исследования.

Ключевые слова: *брак, брачный возраст, добровольное согласие, совместное заявление, государственная пошлина.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 12.07.2020թ.:
Հոդվածը գրախոսվել է 27.09.2020թ.: